ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N **ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ**-21/1

ք. Երևան «20» 04 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Անապատ-2>> ԱԿ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս նախագահ Ա. Հայրապետյանի, որը գործում է կոոպերատիվի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների ՓՈՒԼ-1-ով նախատեսված շինարարական աշխատանքները (ծավալաթերթ-նախահաշվի Հավելված 1-ի մասով)** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 ***Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերից վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից:***

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու սպորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել

Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. **Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. **Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից.

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **130 000 000 (մեկ հարյուր երեսուն միլիոն)** ՀՀ դրամ, որից՝ 21 666 667 (քսանմեկ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.5 Կանխավճարի տրամադրման պայմանները և մարումը՝

5.5.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում:

5.5.2 Կապալառուն կանխավճար ստանալու վերաբերյալ գրությամբ Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի չափի, դրա շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների և ժամկետների, ինչպես նաև՝ ձեռքբերվող նյութերի (սարքերի) վերաբերյալ հիմնավորումներ: Հատկացվող կանխավճարի մարման ժամկետները պետք է համապատասխանեն պայմանագրով սահմանված օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետներին:

5.5.3 Պատվիրատուն կանխավճար հատկացնում է պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա:

5.5.4 Ներկայացվող բանկային երաշխիքի գործողության ժամկետը պետք է առնվազն 90 աշխատանքային օրով ավելի լինի Կապալառուի կողմից կանխավճարի գումարի չափով կատարվելիք աշխատանքների ժամկետից:

5.5.5 Կապալառուի կողմից ներկայացվող բանկային երաշխիքում պարտադիր պետք է նշված լինի Պատվիրատուի՝ կանխավճարի շրջանակներում Կապալառուի կողմից կատարման ենթակա

աշխատանքների ժամկետների խախտման դեպքում տրամադրված կանխավճարի չմարված մասի հետգանձման իրավունքը:

5.5.6 Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց

հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքների կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Հաջորդող տարիների, ինչպես նաև մայթերի կառուցում և ասֆալտապատման աշխատանքները կիրականացվեն այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Անապատ-2>> ԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 1
կառավարական տուն 3	<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Գորիս>> մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2475702910690000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 09202127
Հ/Հ 900011036994	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա.Ա. Կոստյան	Ա. Հայրապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ • 02565827 • ՊԵՏԱԿԱՆ

«ԱՆԱՊԱՏ-2» «АНАПАТ-2» 09202127 «Դ»

Հավելված N 1
«20» 04 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/1 պայմանագրի

ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների ՓՈՒԼ-1-ով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ /Հավելված-1/

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Ճանապարհի կառուցում				
	ՀԱՏՎԱԾ 1				
	Հողային աշխատանքներ				
1	II-րդ կարգի գրունտի մշակում 0,65խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլից	խմ	1306.50	200.00	261,300.00
2	Նույնի տեղափոխում բուլդոզերով մինչև 20մ հեռավորության վրա	խմ	1306.50	50.00	65,325.00
3	VI-րդ կարգի գրունտների մշակում 0.65 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլիցք	խմ	364.30	825.29	300,653.38
4	Նույնի տեղափոխում բուլդոզերով մինչև 20մ հեռավորության վրա	խմ	364.30	50.00	18,215.00
	Ընդամենը՝ Հողային աշխատանքներ				645,493.38
	Ճանապարհային սպասարկում				
6	Հիմնատակային և հարթեցման շերտի պատրաստում 100մմ հաստ. ավազա-կոպճային խառնուրդից	խմ	286.80	800.00	229,440.00
7	Ճանապարհի հիմնատակի պատրաստում բազալտե խճով 150մմ հաստությամբ	քմ	2283.50	1,100.00	2,511,850.00
8	Տաք բիտումի լցաբաշխում 4,12 տն/1000քմ	տն	9.41	200,000.00	1,881,604.00
9	Ծածկույթի պատրաստում "Բ" տիպի մանրահատիկ տաք ասֆալտաբետոնով 5սմ հաստությամբ	քմ	2260.90	4,112.99	9,299,056.79
	Ընդամենը՝ Ճանապարհային պատվածք				13,921,950.79
	Մայթեր				
10	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150x300մմ B-15 դասի բետոնե հիմքի վրա	գծմ	289.00	4,039.24	1,167,339.06
11	Բազալտե խճից 12սմ հիմքի պատրաստում մայթերի տակ	քմ	390.20	1,200.00	468,240.00
12	Մայթերի 30մմ հաստ. ասֆալտաբետոնե ծածկույթ	քմ	390.20	3,300.00	1,287,660.00
13	Միաձույլ բետոնե եզրաշարի պատրաստում 100x200մմ B-15 դասի բետոնով 289գծմ	խմ	5.80	60,000.00	348,000.00
	Ընդամենը՝ մայթեր				3,271,239.06
	Կողնակներ				
14	Ցամաքուրդային III-վ կարգի գրունտի մշակում պահուստում 0.65խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա	խմ	156.20	1,000.00	156,200.00
15	Նույնի տեղափոխում 5կմ հեռավորության վրա կողնակների իրականացման համար	խմ	156.20	1,608.59	251,261.19
16	Կողնակների հարթեցում և խտացում պնեվմոգլդոնով 28սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով, մեկ հետքով, 4 անցումով	խմ	156.20	200.00	31,240.00
	Ընդամենը՝ կողնակներ				438,701.19

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	ՀԱՏՎԱԾ 2				
	Հողային աշխատանքներ				
17	II-րդ կարգի գրունտի մշակում 0,65խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլից	խմ	3060.95	200.00	612,190.00
18	Նույնի տեղափոխում բուլդոզերով մինչև 20մ հեռավորության վրա	խմ	3060.95	50.00	153,047.50
19	VI-րդ կարգի գրունտների մշակում 0.65 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլիցք	խմ	3370.40	825.29	2,781,559.56
20	Նույնի տեղափոխում բուլդոզերով մինչև 20մ հեռավորության վրա	խմ	3370.40	50.00	168,520.00
21	VI-րդ կարգի գրունտների փխրեցում հիդրոմուրճով	խմ	6798.00	5,879.48	39,968,730.94
22	Փխրեցված գրունտների կողլիցում 0.65 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով	խմ	6798.00	500.00	3,399,000.00
23	Նույնի տեղափոխում բուլդոզերով մինչև 20մ հեռավորության վրա	խմ	6798.00	200.00	1,359,600.00
	Ընդամենը՝ Հողային աշխատանքներ				48,442,647.99
	Ճանապարհային պատվածք				
25	Հիմնատակային և հարթեցման շերտի պատրաստում 100մմ հաստ. ավազա-կոպճային խառնուրդից	խմ	467.80	800.00	374,240.00
26	Ճանապարհի հիմնատակի պատրաստում բազալտե խճով 150մմ հաստությամբ	քմ	3724.60	1,100.00	4,097,060.00
27	Տաք բիտումի լցաբաշխում 4,12 տն/1000քմ	տն	15.35	200,000.00	3,069,070.40
28	Ծածկույթի պատրաստում "Բ" տիպի մանրահատիկ տաք ասֆալտաբետոնով 5սմ հաստությամբ	քմ	3687.80	4,112.98	15,167,848.32
	Ընդամենը՝ Ճանապարհային պատվածք				22,708,218.72
	Մայթեր				
29	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150x300մմ B-15 դասի բետոնե հիմքի վրա	գծմ	485.80	4,041.24	1,963,233.92
30	Բազալտե խճից 12սմ հիմքի պատրաստում մայթերի տակ	քմ	655.80	1,200.00	786,960.00
31	Մայթերի 30մմ հաստ. ասֆալտաբետոնե ծածկույթ	քմ	655.80	3,300.00	2,164,140.00
32	Միաձույլ բետոնե եզրաշարի պատրաստում 100x200մմ B-15 դասի բետոնով 485,8գծմ	խմ	9.70	60,000.00	582,000.00
	Ընդամենը՝ մայթեր				5,496,333.92
	Կողնակներ				
33	Ցամաքուրդային III-վ կարգի գրունտի մշակում պահուստում 0.65խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա	խմ	254.60	1,000.00	254,600.00
34	Նույնի տեղափոխում 5կմ հեռավորության վրա կողնակների իրականացման համար	խմ	254.60	1,608.59	409,546.09
35	Կողնակների հարթեցում և խտացում պնեվմոգլդոնով 28սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով, մեկ հետքով, 4 անցումով	խմ	254.60	200.00	50,920.00
	Ընդամենը՝ կողնակներ				715,066.09
	ՀԱՏՎԱԾ 3				
	Հողային աշխատանքներ				
36	II-րդ կարգի գրունտի մշակում 0,65խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլից	խմ	787.73	200.00	157,546.00
37	Նույնի տեղափոխում բուլդոզերով մինչև 20մ հեռավորության վրա	խմ	787.73	50.00	39,386.50

20.04.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/1 պայմանագրի

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
38	VI-րդ կարգի գրունտների մշակում 0.65 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլիցք	խմ	275.20	783.43	215,600.17
39	Նույնի տեղափոխում բուլդոզերով մինչև 20մ հեռավորության վրա	խմ	275.20	50.00	13,760.00
	Ընդամենը՝ Հողային աշխատանքներ				426,292.67
	Ճանապարհային պատվածք				
41	Հիմնատակային և հարթեցման շերտի պատրաստում 100մմ հաստ. ավազա-կոպճային խառնուրդից	խմ	100.16	800.00	80,128.00
42	Ճանապարհի հիմնատակի պատրաստում բազալտե խճով 150մմ հաստությամբ	քմ	1001.60	1,100.00	1,101,760.00
43	Տաք բիտումի լցաքաշխում 4,12 տն/1000քմ	տն	4.13	200,000.00	825,318.40
44	Ծածկույթի պատրաստում "Բ" տիպի մանրահատիկ տաք ասֆալտաբետոնով 5սմ հաստությամբ	քմ	1001.60	4,043.16	4,049,629.84
	Ընդամենը՝ Ճանապարհային պատվածք				6,056,836.24
	Մայթեր				
45	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150x300մմ B-15 դասի բետոնե հիմքի վրա	գծմ	270.00	4,040.61	1,090,963.49
46	Բազալտե խճից 12սմ հիմքի պատրաստում մայթերի տակ	քմ	364.50	1,200.00	437,400.00
47	Մայթերի 30մմ հաստ. ասֆալտաբետոնե ծածկույթ	քմ	364.50	3,300.00	1,202,850.00
48	Միաձույլ բետոնե եզրաշարի պատրաստում 100x200մմ B-15 դասի բետոնով 270գծմ	խմ	5.40	60,000.00	324,000.00
	Ընդամենը՝ մայթեր				3,055,213.49
	Ընդամենը՝ Ճանապարհի կառուցում				105,177,994
	Ընդհանուրը				**105,177,994**
*	**Չնախատեսված ծախսեր 3%**				**3,155,340**
	Ամբողջը				**108,333,333**
	ԱԱՀ 20%				**21,666,667**
	Ընդամենը				**130,000,000**

**Պայմանագրի շրջանակներում, կապալառուի կողմից ներկայացվող կապարողականներում, չնախատեսված աշխատանքների ծախսերը պետք է հաշվարկվեն 50%-ի չափով /1.5%/՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի:*

**Աշխատանքների իրականացման համար հիմք են ընդունվում սույն պայմանագրի կնքման համար գնման ընթացակարգի հրավերով հրապարակված և հետագայում սահմանված կարգով փոփոխվող նախագծային փաստաթղթերը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900010310994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Անապատ-2>> ԱԿ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Գորիս>> մ/ճ
Հ/Հ 2475702910690000
ՀՎՀՀ 09202127

Տնօրեն՝

_____ Ա. Հայրապետյան
(ստորագրություն)

Կ.Տ.

20 04.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/1 պայմանագրի

Հավելված N 2
«20» 04 2021թ. կնքված
N ՀՀԲԿ-ՀՄԱՇՁԲ-21/1 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների ՓՈՒԼ-1-ով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման

/ծավալաթերթ-նախահաշվի Հավելված-1-ի մասով/

2021թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

N	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Աշխատանքների կատարման ժամկետը
1	**Ճանապարհների կառուցում ընդամենը, որից՝**	73 001 472	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան 90-րդ օրացուցային օրը
	Հողային աշխատանքներ	62 625 897	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան 60-րդ օրացուցային օրը
	Ճանապարհի հիմնատակի շերտերի իրականացման աշխատանքներ	10 375 575	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան 90-րդ օրացուցային օրը
2	**Մայթերի կառուցում և ասֆալտապատման աշխատանքներ**	14 612 964	Ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան 60-րդ օրացուցային օրը
3	**Ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ**	42 385 564	Արտաքին կոմունիկացիաների աշխատանքների ավարտին հաջորդող օրվանից հետո ոչ ուշ քան 30-րդ օրացուցային օրը
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	130 000 000	

**** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխությունները անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011086994
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
Ա. Ամիրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Անապատ-2>> ԱԿ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Գորիս>> մ/ճ
Հ/Հ 2475702910690000
ՀՎՀՀ 09202127
Տնօրեն՝
Ա. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«20» 04 2021թ. կնքված
N ՀՀԲԿ-ՀՄԱՇՁԲ-21/1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների ՓՈՒԼ-1 ով նախատեսված շինարարական աշխատանքների (ծավալաթերթ-նախահաշվի Հավելված 1-ի մասով)

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/3	ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների ՓՈՒԼ-1 ով նախատեսված շինարարական աշխատանքներ (ծավալաթերթ-նախահաշվի Հավելված-1-ի մասով)	-	-	-	115 387 036	115 387 036	115 387 036	115 387 036	115 387 036	115 387 036	115 387 036	115 387 036	115 387 036	115 387 036

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մելքումյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Անապատ-2>> ԱԿ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Գորիս>> մ/ճ
Հ/Հ 2475702910690000
ՀՎՀՀ 09202127

Տնօրեն՝

Ա. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 4
«20» 04 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
«20» 04 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 5
«20» 04 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/1 պայմանագրի

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ

NN	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր	Շահագործման երաշխիքային ժամկետ /տարի/
1	2	3
1	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150x300մմ	5
2	"Բ" տիպի մանրահատիկ տաք ասֆալտաբետոն	5

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Անապատ-2>> ԱԿ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Գորիս>> մ/ճ
Հ/Հ 2475702910690000
ՀՎՀՀ 09202127

Տնօրեն՝

Ա. Հայրապետյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«ԱՆԱՊԱՏ-2»
«АНАПАТ-2»
09202127
«Դ»

Արդշինբանկ

№ 652-3087

«19» 04 2021թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՆ21/82-57
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) համաձայն ՀՀ կառավարության 18.02.2021թ.-ի N 216-ն որոշման՝ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՆԱՊԱՏ-2» Ա/Կ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/1 պայմանագրից (այսուհետ նաև՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 13,000,000.0 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում մինչև պրինցիպալի կողմից կնքվելիք պայմանագրով (համաձայնագրով) նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետը, լրանալու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ:

Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի ՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender2@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործառնական տնօրենի տեղակալ-
Վարկերի կենտրոնացված ձևակերպումների և
Ուղեկցման վարչության պետ Իրինա Աբրամյան

Գլխավոր հաշվապահ Հովհաննես Մկրտիչյան

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Գր. Լուսավորիչ 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
www.ardshinbank.am

Արդշինբանկ

№ 652-3088

«19» 04 2021թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՆ21/83-57
(կանխավճարի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) համաձայն ՀՀ կառավարության 18.02.2021թ.-ի N 216-ն որոշման՝ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՆԱՊԱՏ-2» Ա/Կ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/1 պայմանագրով (այսուհետ նաև՝ պայմանագիր) նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) պարտավորվում է բենեֆիցիարի՝ երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև 32,500,000.0 (երեսուներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3. Երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխիք տվող անձի կողմից:

4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև պրինցիպալի կողմից կանխավճարի գումարի չափով կատարվելիք աշխատանքների ժամկետին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Կանխավճարը փոխանցվում է պրինցիպալի «Արդշինբանկ» ՓԲԸ բանկում սպասարկվող թիվ 2475702910690000 հաշվարկային հաշվին:

7. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տված անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԲԿ-ՀՄԱՇՁԲ-21/1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները, կամ

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

Կանխավճարի շրջանակներում պրինցիպալի կողմից կատարման ենթակա աշխատանքների ժամկետների խախտման դեպքում բենեֆիցիարն իրավունք ունի հետ գանձել տրամադրված կանխավճարի չմարված մասը:

8. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

9. Երաշխիք տվող անձի կողմից բենեֆիցիարի պահանջի հիման վրա վճարում կատարելու դեպքում երաշխիքային գումարը նվազում է համապատասխան գումարի չափով:

10. Երաշխիքի գումարը նվազեցվում է բենեֆիցիարի կողմից այդ մասին երաշխիք տվող անձին գրավոր դիմում տալու միջոցով:

11. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա երաշխիք տվող անձը երաշխիքով բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով երաշխիքի իր օրինակը:

12. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից երաշխիքի 11-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Գր. Լուսավորիչ 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
www.ardshinbank.am

13. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

14. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է բենեֆիցիարին:

15. Սույնով բենեֆիցիարը համաձայնություն է տալիս այն մասին, որ իր կողմից երաշխիքի բնօրինակը երաշխիք տված անձին վերադարձվելու դեպքում դադարում են երաշխիքից բխող երաշխիք տվող անձի հանդեպ բենեֆիցիարի իրավունքները:

16. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

17. Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքի տրամադրման օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարի (գնումները համակարգողի) tender2@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Գործառնական տնօրենի տեղակալ-
Վարկերի կենտրոնացված ձևակերպումների և
Ուղեկցման վարչության պետ — Իրինա Աբրամյան

Գլխավոր հաշվապահ — Հովհաննես Մկրտիչյան